

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ

Ս. ԳՐ. ԼՈՒՍԱԽՈՐԶԻ ԽՃԱՆԿԱՐԻՆ

Հանգուցեալ Գեորգ. Հ. Յովհանն վրդ. Աւգերի ձեռագիր աշխատութիւններուն մէջ գտանք այս ուսումնասիրութիւնը, զոր հանդիմով կը հրատարակեմք՝ իր շահեկանութեամբ պատմաբան: Ուսումնասիրութիւնը, իբրեւ տարեկան կանառի բանաստեղծութիւն, 1942-ի Յունուարին կարդացուած է ներառական հաւաքոյթի մը մէջ, Ս. Ղազար:

ԾԱՆՈԹ. ԽՄԲ.

«Բազմավէպ»ի մէջ Հ. Վարդան Վ. Հացունի հնագիտական համառօտ քննադատութեամբ մը ուսումնասիրած է Լուսաւորչի մէկ նորագիւտ խճանկարը «Կենդանագիր Ս. Գրիգոր Լուսաւորչի Ս. Սոփիայի մէջ» վերնագրով յօդուածի մը մէջ⁽¹⁾, ուր առանց հարկ տեսնելու դրական եւ պատմական ստուգադոյն վաւերացուցիչ աղբիւրներու գիմելով՝ միայն արուեստագիտական համեմատութեանց միջոցաւ եւ բանաւոր տրամաբանութեան առաջնորդութեամբ կը յանգի այն եզրակացութեան, որ առ հասարակ ընդհանրութեան կարծիքով ընդունուած համոզման հակառակ՝ այդ խճանկար կենդանագիրը ոչ թէ 2 դարուն Յունաստիանոսի հրաշագեղ տաճարին շինութեան ժամանակ յօրինուած է, այլ ժ դարու վերջին տարիներու դործ մը, Վասիլ Բ. պուլկարասպան կայսեր միւսնոյն տաճարին վերանորոգութեան պահուն, զրեթէ յարամբրի գաղտագողի սպրդմամբ ներմուծուած եւ զուրկ գեղարուեստական յարգէ:

(1) Բազմավէպ, 1941, թ. 1, էջ 13, 1943, թ. 1-6, էջ 35:

Հոն կը կարդանք. «Այս բոլոր համեմատութեանն յետոյ կրնանք վճռականապէս հետեւցնել՝ թէ Ս. Սոփիայի Լուսաւորչի կապ չունի 2 դարու հետ, եւ միջնադարեան դործ մ'է... կը կորսնցնէ իր հնագիտական կարեւորութիւնը, զրկուելով կարծեցեալ մեծ հնութենէն, եւ ունենալով իւր ուրիշ ժամանակակիցներն յոյն եւ հայ արուեստներու մէջ»: Եւ յետոյ կը պարզէ թէ ինչպէս մեկնելու է անոր մուտքը բիւզանդական կայսերական տաճարին մէջ այդ շրջանին:

«Ծանօթ է - կ'ըսէ - մեր Տրդատ ճարտարագետը, կառուցող Անույ կաթողիկէին, Արգիշտի եւ ուրիշ նշանաւոր եկեղեցեաց: 989-ին Երբ Երկրաշարժ մը վերէն վար ճեղքեց զՍ. Սոփիան, եւ կը սպառնար կործանումը, հոն գիպեցաւ հայ ճարտարագետը. եւ ինքն իսկ, կը դրէ Ասողիկ, առաջնորդեց անոր նորոգութեան «իմաստուն հանձարով պատրաստեալ գեղարարական կազմածոյն եւ սկզբնաւորութեան զլինելն» որ քան զառաջինը գեղեցիկ եղեր է: Կրնանք ուրեմն առանց վարանման եզրակացնել՝ թէ Տրդատայ ազգասիրութեան գիւտն եղաւ խճանկարի նոյն տաճարին մէջ Հայոց Լուսաւորչի, որպէսզի անոր յիշատակը մնայ հոն հաստատուն, եւ հայատեաց Բիւզանդացիք յանձին առնեց հօր՝ աղիւսայ մեծարեն որդիքն իսկ»:

Կը խոստովանինք որ այս եզրակացութիւնները շատ զփուրընտել թուեցան մեզի եւ զանոնք հաստատող պատճառաբանութիւններն ալ ըստ բաւականի տրկար: Բարոյական գլացման տեսակէտով կարելի է ընդունիլ որ Վասիլ կայսեր ժամանակ երբ արդէն հայոց եւ յոյնքու

միջեւ անջատման խոր աղօս մը բացուած էր չորս դարերէ ի վեր փոխադարձ ատելութեան եւ հակառակութեան ոգին շարունակ արծարծելով, Բիւզանդացիք լաւագոյն հոգեկան տրամադրութիւն մ'ունենային Հայոց հանդէպ քան Յունաստիանոսի ժամանակ, երբ տակաւին որ եւ է պաշտօնական բաժանում գոյութիւն չունէր եւ կայսեր դահակից կը բաղմէր Թէոփորայի պէս իմաստուն, արիասիրտ հայազգի կայսրուհին՝ կայսեր հոգւոյն մէջ ներշնչող ամէն վսեմական եւ գերազանց ձեռնարկներու եւ գաղափարներու. Երբ կայսրը իմաստուն օրէնսդրութեամբ եւ հանձարիմաց կարգադրութեամբ պետական մարզերը նոր կազմակերպութեամբ կը զօրացնէր, հիմնելով զրեթէ հայկական ընդարձակածաւալ աշխարհ մը կայսրութեան սահմաններուն մէջ, նոյնիսկ կողոպտելով մերձակայ գաւառներու իրաւունքները՝ չորս նահանգներու բաժնւած, եւ իր շինարար բարեպաշտական հոգւոյն աւանդ մը կը թողուր Հայաստանի մէջ Ս. Գեորգայ նուիրուած տաճար մը կանգնելով: Դարձեալ կարելի է արդեօք անթաղել որ դուրսէն Եւրոպայէն ազգի անձանթ ճարտարագետ մը համարձակութիւն ունենար ինքնագլուխ ներմուծելու տաճարին յատուկ սուրբերու դասակարգին մէջ նոր հայկական կենդանագիր մ'ալ: Պէտք է մանաւանդ մոռնալ որ Տրդատայ մասնակցութիւնը միմիայն խորհրդատուական էր եւ ոչ իրապէս շինութեան օժանդակութիւն, եւ իր ձեռնարկութեան շինութեան ամբողջական ամբողջութիւն, Եւ ոչ թէ որմերու նկարագրողութեան հետ կապուած էր, բաւական է որ բոլորովին տարբեր իմաստով չուղենք հասկնալ Տարօնցի Ասողիկի Տրդատայ համար տուած տիտղոսը «բարադործ», եւ ճարտարագետութեան իջեցնել զինքը խրճազործութեան արուեստի: Եւ հոսկ այսպիսի համարձակ եւ յանդուրձ ձեռնարկներ Տրդատայ լիովանէ նոյնիսկ

եթէ տեղի ունենար, պիտի հանդուրժէին արդեօք Բիւզանդիոնի յոյն եկեղեցական նուիրապետութիւնը, քաղաքական իշխանութիւնները եւ հայատեաց ժողովուրդը, եւ կամ պիտի զիջանէին արդեօք ամէն օր աչքերնուն առջեւ ունենալ այսպիսի յիշատակ մը:

Իսկ արուեստի վրայ հիմնուած եզրակացութիւնը կը ծագէր զանազան համեմատութեանց արդիւնքէն, որով «պիտի տեսնուէր իսկոյն (Ս. Լուսաւորչի կենդանագիրն) աննմանութիւնը 2 դարու եւ առ հասարակ հնագոյն ձեւերու հետ»: Բազմապատկանց երկու գլխաւոր եզրերն առնուած են.

1) Հաւանալի Ս. Վիտալ եկեղեցին կայ 2 դարու կէսէն, ուստի ժամանակակից Ս. Սոփիայի, յորում խճանկարուած է նոյն քաղաքի Մաքսիմիանոս եպիսկոպոսը: 2) Համեմատութեան ուրիշ կարեւոր եզր մ'է մեզի կարեւոր, Բարսեղ Բ. կայսեր (976-1024) նկարագրող Յայսմաւուրքը, եպիսկոպոսական բազմաթիւ կենդանագրերով:

Արդ բաղդատելով իրարու հետ Ս. Վիտալի եւ Բարսեղեան Յայսմաւուրքի ձեւերը, կը տեսնենք անոնց մէջ զգալի տարբերութիւններ, յորս Լուսաւորչի կենդանագիրը կը զուգընթանայ բոլորովին Բարսեղեանց հետ, իբրեւ անոնցմէ մին: Համեմատութեանց արդիւնք նմանութիւններ միւսն եւ միւսն խոտորումներ հաստատուած ան հետեւեալ կէտերու վրայ.

1) Մաքսիմիանոս կը կրէ նախօրտին ներքեւ պատմուճան մը, շատ լայն թեղանիքներով. իսկ միւսներունը ատոր կիսուն չափ լայն ու կարճ է, եւ այդ պատճառաւ միշտ տեսանելի:

2) Ս. Վիտալինը գօտելոյծ է, իսկ Բարսեղեանը ոմանք նոյնպէս եւ ոմանք գօտելու, ինչպէս է եւ Լուսաւորչի:

3) Նմանութիւնը Մաքսիմիանոսի վրայ ձգուած է լայն ու թոյլ կերպով. միւսներուն՝ ատոր հակառակ պրկուած եւ ամ-

փոփ բռնուած է լանջաց վերեւ, ձեւով երկուստեք համաչափ:

4) Սաչը փոքր, հաւասարաթեւ ու ցրտուած Մաքսիմիանոսի վրայ, ուր Բարսեղեանց խաչը մեծ է, վերին եւ ստորին թեւերն երկայն եւ թուով երկու, լանջաց վրայ եւ զուգադիր:

Այս համեմատութեանց արդիւնք նմանութիւնները եւ խոտորումները հաստատելու համար ի վկայութիւն կը կոչուին տակաւին Հռոմայ Ս. Ագնէսի մէջ խճանկարները Քսիմաքոս եւ Ոսորիոս պապերուն, մին Ձ դարու սկիզբէն եւ միւսն է դարու երկրորդ քառորդէն. եւ միջին դարէն հայկական Երկու քանդակ պատկերներ Աղթամարայ Ս. Սաչի Լուսաւորիչը Ժ դարու առաջին քառորդէն եւ Կոստանդնի պահարանին (1293էն):

Քննենք այս համեմատութեանց արժէքը եւ նախ հորիզոնը պարզելու համար հեռացնենք բաղդատութեան համար մէջ բերուած վերջին օժանդակ կրկին եզրները որոնք հաւասարապէս կրնան ծառայել թէ ի նպաստ եւ թէ հակառակ երկու կողմերու ալ, դիտելով որ Ս. Ագնէսի խճանկարներու մէջ Քսիմաքոս չունի լայն թեւանիք, այլ սեղմ եւ անտեսանելի. Ոսորիոսի եմփորոնը կը կրէ ոչ թէ հաւասարաթեւ խաչ, այլ անհաւասար կամ երկայնասրբուն: Նոյնպէս հայկ. երկու տիպարներէն մին բոլորովին անբաւական է այս քննութեան ծառայելու, որովհետեւ արուեստագործը չունենալով նուրբ դիժեր յօրինելու կարողութիւն, եւ ի փոխարէն ունենալով իրեն սահմանուած միջոցի ամենամեղմ պարունակ մը, կաղապարած է իր կենդանագիրը որքան կրցած է: Առ առաւել կրնանք ըսել որ թերեւս աւելի կը նպաստէ Երրորդ տեսակ համեմատութիւն մը զոր քիչ վերջ մենք պիտի անդրադարձնենք եմփորոնը կրելու տեսակին նրկատմամբ, այսինքն է բոլորածեւ կուրծքի վրայ պարուրած, ոճ մը որ յաճախ կը տեսնուի յատկացուած փղոսկրեայ

քանդակներու վրայ: Իսկ միւսը՝ Աղթամարայ Ս. Սաչի Լուսաւորիչը, Ժ դարուն սկիզբը, ուստի ժամանակակից կամ քիչ առաջ քան Ս. Սոփիայի Վասիլեան նորդուութեան եւ նոյն կայտեր Յայսմաւուրքի շրջանը, ունի տակաւին Հռաւեննական Մաքսիմիանոսի կրած եմփորոնի Ձ դարու տիպարը ճիշտ միեւնոյն ձեւով լայն եւ արձակ կուրծքին առջեւ թոյլ ձգուած: Ուստի կրնանք հետեւաբար խորհրդածել եւ կատարել հետեւեալ կարեւոր ընդհանուր դիտողութիւնները զեղարուեստի գործոց համեմատական քննութեան նրկատմամբ.

1) Շատ վտանգաւոր եւ կասկածելի է ժամանակագրութեան համար հիմնուիլ սոսկ արուեստագիտական գործերու վրայ, երբ չեն վաւերացուիր նաեւ գրաւոր կամ այլ նոյնպիսի համազօր ապացոյցներու հաստատութեամբ, վասնզի արուեստագործը յաճախ կ'ամ կ'օրինակէ եւ կը ներշնչուի հին դարերու աւանդական դարձած տիպարներէ, եւ կամ երբեմն ինքը իր վաւերացուած խիղախ եւ յանդուգն խոյանքով կը սլանայ կը թափանցէ ապագայի ասպարէզին մէջ եւ կը յղանայ ու կը ստեղծագործէ տիպարներ ու ձեւեր, որոնք յաջորդող դարերու դարձելով պիտի ըլլան: Թէ որքան յուսախաբութեան աղբիւր են արուեստագիտական գործերը ժամանակագրութիւն հիմնելու համար, բաւական է յիշել միայն Սաչի թափոնէսի հռչակաւոր թաղը, որ իրրեւ հնութեան ամենաթանկագին աւանդ մտաւ Փարիզու պետական թանկարանին մէջ, նոյնիսկ դայն շինող արուեստագէտին աչաց առջեւ: Նոյնպէս զեւ մի քանի տարի առաջ իտալացի երիտասարդ արձանագործի աշխատութիւն մը, իրրեւ փիղիասեան անհերքելի հրաշակերտ հռչակուեցաւ զեղարուեստագէտ քննադատներէ: Քանոյ մը եւ այլ իրեն նման հանճարեղ արուեստագէտներ ապացոյց մ'են որ շատ դարեր վերջն ալ հանճարի ցոլքը կը ճա-

ռադայթէ նախնիթաց դարերու աշխարհահռչակ զլուխ գործոցներ վերականգնելու եւ անոնց նմանները ստեղծագործելու կարողութեամբ: Եւ ասոր հակառակ ալ, յաճախ առիթներու մէջ տեսնուեցաւ, մանաւանդ հնագիտական քննութեանց նրկատմամբ, որ ինչ ինչ կաղապարեալ ձեւեր, որոնք անտարակոյս այս կամ այն դարու յատուկ դրոշմ մը կրել կը թուէին, յանկարծ նոր անակնկալ յայտնուեալ ուրիշ հին յիշատակարանի եւ կամ յուշարձանի մը, վերիվայր յեղաշրջուեցան հնախոյզ արուեստագիտաց դատաստանները դարերու հոլովման մէջ: Զգեստաւորման այս կամ այն տարազը, կամ ինչպէս մեր ներկայ պարագային մէջ լայն կամ տեղմ թեղանիք, երկրաչափական չափակցութիւններ կամ խոտորումներ դիժերու եւ ցցուածքներու, հիւսուածքներու մանուածապատ դարձուածքներ, հնարագիւտ դարձեալներ, նոյնիսկ խաչը որ իրրեւ միակ նուիրական դադափարանիչ՝ կը համարուէր իրաւամբ զուտ քրիստոնէական դարերու ստեղծագործութիւն եւ նշանաբան յատուկ շրջանի, նորանոր հնախուղական պեղումներու միջոցաւ յանկարծադիւտ յայտնութեամբ դառնուեցան տասնեակ դարերով առաջ յօրինուած արուեստագիտական ստեղծագործութեանց մէջ: Այսպիսի երեւոյթներ նորոյթներու կը նրմանին, որոնք երբ զեւ նոր այսօր կը հրնարուին այստեղ, մերձաւոր կամ հեռւոր դաւառի եւ աշխարհի մը մէջ կրնան թերեւս դարերով առաջ կիրարկուած եւ արդէն դադրած անգամ ըլլալ գործածութենէ: Ժամանակագրական ստեղծութիւն մը կազմելու համար հարկ է անոնց հետ փնտռել ու յուզել աւելի հաստատուն կոռուաններ եւ ապացոյցներ, ինչպէս գրական աւանդութիւն, դիմորոշիչ սովորաբար գործածուած յատկութիւններ, բոլորածեւ կամ քառակուսի լուսապսակ սուրբի կամ եկեղեցական անձի մը ողջ ըլլալը կամ ոչ արտայայտող, պատմական

դէպքի մը արտայայտիչ յիշատակը կամ աստիճանաւոր անձի մը սեպհական կնիքը եւ այլն: Փարիզու մետալներու թանկարանին մէջ կը պահուի փղոսկրէ քանդակ մը որ մինչեւ ցարդ զեղարուեստագէտ քննադատներէ կը համարուէր Ռոմանոս Դ. կայսեր վերաբերեալ. ընդհակառակն այսօր ստեղծուած է որ կը պատկանի Ռոմանոս Բ. ի, այսու յանկարծ շուրջ դարու մը աւելի հնութիւն ստանալով: Սոյնօրինակ ոստում մը, եւ այս անգամ երեք դարերու, կը կատարէ Վրաստանի ամենահին շէնքերէն մին՝ ի Մարգուրի, որ ցարդ կը համարուէր Ժ դարու շինուած, այսօր ընդհակառակն հաւաստուած կը համարուի իրրեւ է դարու գործ, որով իր պարունակած դարձեալներ ու ճարտարապետական ոճերն ալ յանկարծ կ'անցնին կը փոխադրուին հնագոյն տիպարներու եւ ձեւերու կարգը:

2) Յատկապէս պէտք է չափազանց դիւրահաճութեամբ կաշկանդուիլ, իրրեւ անհերքելի ապացոյցներ նկատելով զեղարուեստական գործերու վրայ նշմարուած այս կամ այն ոճով յօրինուած տարազները եւ հանդերձաւորութեան կամ այլ ձեւերը, երբ անոնց ժամանակագրական ծագումն ու դարագցումը կը հետադառնենք եւ կամ անոնցմով արուեստագիտական գործի մը, շէնքի մը, յիշատակարանի մը ժամանակը կ'ուզենք որոշել. որովհետեւ շատ անգամ կը պատահի որ արուեստագէտը անտեսելով իր ապրած ժամանակի զադափարը, կը փոխադրէ իր տիպարը հնագոյն դարերու ստոյգ կամ երեւակայութեամբ յօրինուած ձեւերու. եւ կամ հին ժամանակներու անձերը կը զգեցնէ իր օրերուն կամ նոյնիսկ բոլորովին ինքնահնար երեւակայական տարազներով, ինչպէս տակաւին այսօր կը վարուին շատ արուեստագործներ, մանաւանդ սրբադան պատկերագրութեան մէջ: Ունինք ի Լատերան Սան Վեներանդիոյ մատրան մէջ Քրիստոսի պատկեր մը ճիշտ հարադատ Դ

դարու տիպարով, մինչդեռ դիտենք որ անոր յորինումը կատարուեցաւ Յովհաննէս Դ. քահանայապետին ժամանակ (640 - 642 թուին)։ Առնենք դարձեալ արուեստագէտներու նկարած կամ քանդակած վերջին ընթրիքի պատկերը, այնքան յաճախուած ամէն դարերու եւ ամէն աշխարհներու մէջ դրեթէ հազարաւոր նշանակներով։ Կրնա՞յ արդեօք քննադատ մը անոնց վրայ յենուլ Յիսուսի ժամանակակից անձերու տարազը, ընտանի կենցաղի սովորութիւնները եւ այլն, ստուգելու համար երբ առաքեալը առ առաւելն կամ ընդհանուր աւանդական ձեւ մը կը պահեն եւ կամ միջին ու վերջին դարերու մէջ նկարչին ճանչցած այս ինչ կամ այն ինչ հրեան, եւ կամ ասորի եւ հայ վաճառական մը կը ներկայացնեն իր այլատարազ զգեստով, առանց տատամսելու, երբեմն նոյնիսկ այսօրուան հրապարակներու մէջ շրջող տափասներու ձեւերը դժելու։ Այսպէս նաեւ կարելի է մեր զրջապրաց մանրանկարները հիմ առնել ձեռագրի մը ժամանակը սահմանելու համար, եւ կամ տարազի մը պատմական ձեւը ստուգելու, առանց կանխաւ հետազոտելու անոնց բրնազի կամ ներքնոյ օրինակ յոյն կամ ասորի աղբիւրները։

3) Երբորդ ընդհանուր դիտողութիւն մ'ալ կարելոր է արուեստական գործերու համեմատական քննութեան մէջ սխալներէ բոտ կարելոյն զգուշանալու համար։ Հարկ է խրաքանչիւր գործ նկատի առնել եւ ուսումնասիրել իր տեսակին եւ նիւթին առարկայական, մանրամասնութեանց եւ յատկութեանց մէջ փորձառական կամ արհեստի կերպով։ Որովհետեւ այլ է արուեստագիտական պահանջին հանդէպ այս կամ այն նիւթի ներկայացուցած յարմարութեան եւ անյարմարութեան հանդուժմանը. ա'յլ է օրինակի համար ջրաներկ որմանկարի եւ կամ խճանկար պատի եւ յատակի պահանջը եւ ընծայած դիւրութիւնը, ուր կայ տեղւոյ ընդարձակու-

թիւն, առատութիւն եւ յարմարութիւն լուսոյ, եւ ի հակառակէն դժուարութիւնները որոնց պէտք է յաղթէ արուեստագործը, ըստ պարագային եղանակաւորելով եւ վերածելով իր նախադադարին արտայայտութիւնը, երբ ամփոփ եւ սեղմ ասպարէզ մ'ունի ցուցադրութեան, երբ պիտի հաշուէ նաեւ մարմարի փոքրիկ հատիկներու շարադրութեան յարմարութիւնը եւ սեպհական պարագաները լուսոյ ճաճանչելուն եւ ջնարակի գունապեղծան փոխադարձ յարաբերութիւնները։ Այսպէս նաեւ ա'յլ է մանրանկարի սահմանադրած սեղմ եւ անձուկ միջոցին ստիպողական պահանջը էջի մը վրայ գրչի եւ վրձնի դժագործութեան եւ երփներանգ պատկերացման նկատմամբ, մանաւանդ որ շատ փափուկ դիտողութեան առարկայ է այս տեղւոյ կամ միջոցի հանդամանքը, որ յաճախ արուեստագէտին հանճարը կը պարտաւորէ խիղախ թոյլթներու, եւ կամ միջակ կարողութիւնները կը հակէ դայթել համբաւարար ճղճիմ ստորնութեանց մէջ։ Առնենք օրինակի համար խումբ մը խորաքանդակներու արեւելեան արուեստէն, որոնք լաւ կը բացատրեն մեր դիտողութեանց իսկութիւնը։ Հոն արուեստագիտական դադափարի ըմբռնումն ու արտայայտութիւնը բիւզանդական արուեստագէտներու միջնադարեան ծայրայեղութեանց հետ որեւէ կապ չունին. ժամանակաւ եւ տեղով բաւական հեռու ենք եւ անոնց ծառայական ազդեցութեան ենթարկուելու վտանգէն զերծ. կը գտնուինք լիովին Կովկասեան զուտ եւ ամենահարադատ արուեստի եւ արուեստագէտներու առջեւ եւ ոչ ալ անվարժ համբաւներու ձեռագործներ են, որովհետեւ կու գան այնպիսի դարդաքիտ միջավայրէ, Աթէնք, Դուին, Պետրա եւ Զուարթնոց, ուր արեւելեան զեղարուեստը իր զանազան գլուխ գործոցներն արտադրած է, եւ հոն նշմարուած այս առերես թարօրինակութեանց մէջ անգամ

կը փայլի ճարտարագործի հնարիմացութիւնը։ Դիտենք Տիրամօր մը հանդերձաւորման հանգրիմները երկու կողմերէն զուգահաւասար շերտաւորութեամբ կուրծքին վրայ եւ մինչեւ ծունկերը, ուր սրանկին եռանկիւնաձեւ կը բացուին շրջադրեալ ծալիծալ զեղեցկութիւնը ցուցնելու համար. զուգահաւասարութիւն որ նոյնիսկ ոտքերուն անքնական կացութիւն ստեղծած է, ճշգիւ դրաւելու համար ճարտարապետական կողմնակի սիւնակներու եւ յենարան պատուանդանի միջավայր անջրպետը։ Եօթներորդ դարու գործ մըն է Աթինի՝ Վրաստանի մէջ հայու մը ձեռքով շինուած եկեղեցին, ինչպէս արձանագրութիւն մը կը վաւերացնէ։ Նոյնպէս է նաեւ ժամանակակից խորաքանդակը ի Դուին գործուած, կենդանադիր սուրբի մը, որուն առժամ կարող չենք ինքնութիւնը եւ նոյնիսկ սեռն անգամ որոշել. եւ եթէ դօտիէն առ ի շեղ վար կախուածը դաշոյն մ'է, կրնանք հաւանորէն զինուորական սուրբերէն մին եւ թերեւս նաեւ Ս. Սարգիս անուանել պարուկային տարազով, գրեթէ հանդուստիպ այն խումբ մը զինուորներու, որոնք հրնադարեան յուշարձանէ մը զերծած, դարերէ ի վեր հաւատարիմ կը հսկեն Սուրբ Մարկոսի անկիւնը, Վենետիկի մէջ։

Դարձեալ շատ յատկանշական է ի Պետրա Վրաստանի գտնուած եկեղեցական անձանց խմբակցութիւնը, որ այժմ կը պահուի Տփղիսու թանգարանին մէջ. խորաքանդակ մը՝ դոր հրատարակիչը՝ Պալթրուսայթիս կը հակի ԺԹ դարու յատկացրել, մինչ ընդհակառակն կարելի է շատ աւելի հին ժամանակի մնացորդ ենթադրել հաւանորէն՝ նկատի առնելով թէ՛ անսիւն որմայեց կամարակապը եւ թէ՛ երկու գաւազանաձեւ խնձորաղուխ սիւնակները, որոնց մին ողջ է եւ միւսը ջախջախուած։ Յամենայն դէպս մենք հիմա անոր ժամանակէն աւելի կ'ուզենք նկատել կեցուածքը. եպիսկոպոսին երկու սիւնակ-

ներու մէջ զսպուած իրանը, աղօթական բաղուկները կաշկանդուած, միայն գլուխը անչափօրէն սլացած է միջոցի բարձրութիւնը դրաւելու համար. նոյնպէս սեղմ ու զսպուած է բուրվառակի սարկաւազը, որուն զլուխն ալ մեծ է համեմատօրէն միւսնոյն պատճառաւ. ամէնէն աւելի զոհուածն է քահանան, որուն ջախջախուած վերի մասերը պիտի ներկայացընէին հաւանորէն զինքը աւետարանի ընթերցման դրութեան մէջ, որովհետեւ կը գտնուի ամպիոնի վրայ։

Հուսկ Զուարթնոցի մէջ գտնուած երկու կամարամէջի բարձրաքանդակը, Եօթներորդ դարու հայկական զեղարուեստի կատարելագոյն գործերէն մին, ուր այնքան սքանչելի է կեցուածքի եւ շարժուածքի զմարտական կատարելութիւնը, որ գրեթէ չեն թողուր մեզի անդրադառնալ անգամ որ մարմինը մէջքէն ի վար զոհուած է կամարակապին ժլատ անջրպետի պահանջմանց։ Կը ցաւինք մեծապէս որ ներկայ արտատպութեան վրայէն կարող չենք մասնաւորել անձնական յատկանիշները, որոշելու համար զէթ մերձաւորապէս ինքնութիւն մը, որ կրնայ այս երկուցի ներքեւ նոյնիսկ ինքը ճարտարապետը կամ քանդակագործ արուեստագէտ ճարտարն ըլլալ, ինչպէս նոյնպէս ներկայացնել մարդարէններէ կամ առաքեալներէ մին իր մարտիրոսական նահատակութեան շարժարանքի նշանագործիներով։

Առնենք երկրորդ օրինակ մ'ալ Խոտակերաց վանքի Ս. Նշանի մասնատուիւր, յարգի նմոյշ մը հայկական ոսկերչութեան արուեստի ԺԴ դարու արշալոյսին (1300), ուր այս անգամ համբաւ արուեստագործը երկու հրեշտակները տարածած է ամբողջ մարմնոյ երկայնութեամբ երկուստեք կամարակապ կողերու վրայ ձակաւորն անկիւնամէջ անջրպետը լեցնելու համար, անարուեստ կերպով թեւերը պարզելով մին կիսաբաց եւ միւսը ուղղորդ վերամբարձ։ Լաւապոյն յաջողած են միւս կեն-

դանադիր քանդակները եւ ըստ դրաւած իւրաքանչիւր սիւնակի կամ անկեան ճիշտ համեմատութեամբ յօրինուած. ընդհանրապէս բաւական անյաջող են դարձեալ դռնակներու ներքեւի կողմը քանդակուած Միքայէլ եւ Գաբրիէլ երկու հրեշտակապետներն ալ, որոնց թեւերէն մին բոլորովին զոհուած է: Դիտենք հոս յատկապէս Ս. Գրիգոր Լուսաւորիչը, որուն երկայն եմիփորոնը բոլորաձեւ պարուրուած է ուտերուն շուրջ, ըստ ամենայն տիպարին, զոր կը տեսնենք 2 — է դարերու փրդոսկրէ քանդակներու վրայ եւ ըստ ամենանոր տիպարի որ տակաւին այսօրուան սովորական կիրառութիւնն է: Ոչինչ նոր ընդ արեւակամբ:

Արդ, աչքի առջեւ ունենալով այս ընդհանուր կարեւոր դիտողութիւնները, մտնենք մեր առաջարկեալ նիւթին քննութեան՝ մի առ մի զննելով Լուսաւորիչի խճանկարը վեցերորդ դարէն տասներորդին իջեցնելու համար յառաջ բերուած պատճառաբանութիւնները, եւ միեւնոյն դարերու սանդուղի աստիճաններու կարգով վերստին բարձրացնելու համար դայն իր շինութեան 2 դարուն:

Նախ երկու համեմատութեան եզրները որ առնուած են իրրեւ իրարու հակադիր երկու զանազան շրջաններու սահմանածայր կամ յայտարար, իրականութեան մէջ գոյութիւն չունին. երկուքն ալ միեւնոյն ականակիտ աղբիւրէ բղխած վճիտ առուակներ են եւ միեւնոյն բիւզանդական գեղարուեստի հիանալի արտայայտութիւններ են: Միեւնոյն Յուստինիանոսն է որ հիմնած ու զարդարած է իր կայսերական ճոխութեամբ, իբրեւ բիւզանդա-

կան ճարտարապետական արուեստի գլուխ գործողներ, թէ Հռաւեննայի Ս. Վիտալի եկեղեցին եւ թէ Կ. Պոլսոյ Աստուածային Իմաստութեան նուիրուած Այա Սոփիա հոյակապ տաճարը. եւ չորս դար վերջը միեւնոյն կայսերական ճոխութեամբ դարձեալ յօրինուած է հայազգի Վասիլ Բ. կայսեր Յայամաւորքը, իբրեւ հրաշալի գլուխ գործող մը բիւզանդական մանրանկարչութեան արուեստի: Երկուքն ալ հասարակապէս կը պատկանին իրենց երրորդ հարադատին հետ, Վասիլ Ա. հայազգի կայսեր անուամբ հռչակուած մանրանկարչական ուրիշ գերազանց արտադրութեան մը, միեւնոյն գեղարուեստական շրջանին, ուր պարծանք է մեզ հայոցս համար տեսնել ներշնչող եւ ոգեւորող հայազգի կայսրուհի մը եւ հայազգի երկու կայսրներ. երկուքն ալ հաւասարապէս կը պատկանին բիւզանդական ոսկեդարուն, եթէ բիւզանդական բարձր ուղեք առնել իբրեւ գեղարուեստի յատուկ շրջանի մը նշանաբան: Որովհետեւ, ինչպէս որեւիցէ սեպհական շրջան գեղարուեստի ճաշակներու եւ ոճերու արտայայտութեանց մէջ, այսպէս ալ բիւզանդական ոչ երբեք յանկարծատիպ երեւոյթ մ'եղած է: Ունի ընդհանրապէս իր աստիճանաւոր յառաջխաղացումը, զարգանալով հետըհետէ նորահելլէն հիման վրայ յաջորդաբար բերուած եւ ազդեցութեամբ արեւելեան, մանաւանդ յատկապէս ասորա-եգիպտական ներշնչման տարրերով:

Հ. ՅՈՎՀԱՆ ԱԻԳԵՐ

(Շարունակելի)

ՄԵՐ ՆԱԽՆԵԱՑ ՀԱՒԱՏՔԸ

ՏԻՐԱՄՕՐ ԱՆԱՐԱՏ ՅԱՌԻԹԵԱՆ ՄԱՍԻՆ

(Շար. Բազմ. 1954, Բ. 8-10, էջ 233)

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Մ Բ .

ԱՆՏԵՂԻ ԵՒ ԹԻԻՐ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Տիրամօր նուիրուած տարուան ընթացքին (1954), Անարատ Յղութեան մասին ուսումնասիրութիւն մը հրատարակած էինք⁽¹⁾: «Սիոն»ի⁽²⁾ եւ «Շողակաթ»ի⁽³⁾ մէջ խկոյն կարծիքներ յայտնուեցան նոյն նիւթին շուրջ: Կը փութանք քանի մը խորհրդածութիւններ եւս աւելցնել՝ իբրեւ եզրափակում:

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆԻ ԿԱՐԾԻՔԸ

Ն. Եպս. Ծովական ուղած է կարգ մը նկատողութիւններով քննադատել մեր ուսումնասիրութիւնը: Դժբախտաբար այդ տողերը, աճապարանքով գրուած, կցկըտուր մէջբերումներով եւ չափերտներով, ու մանաւանդ՝ հեղեական եւ արհամարհոտ բացատրութիւններով խառն, մեզի տարակուսիլ կու տան յօդուածագրին քրննական անաչառութեան:

Խօսինք հակիրճ փաստերով:

1. — Մեր շարականներէն քաղելով, հինգ ենթարաժանութիւններու մէջ հաւաքած, դասաւորուած ու մեկնած էինք «Անարատ Յղութեան» ի նպատակ վկայութիւններ: Ապա, վեցերորդ բաժնի մը մէջ, միահաղոյն ներկայացուցած էինք «Անարատ Յղութեան» հակառակ կարծուող 7-8 հատուածները, ուր կը յայտնուի «մաքրագործում»ի գաղափար մը Ս. Կոյսին մէջ, Աւետման առթիւ: Հուսկ, ջանացած

էինք, նախորդներու հետ բաղդատելով՝ ճշտել «մաքրագործում» կամ «մաքրագործում» եզրին նշանակութիւնը. առ այս՝ դիմած էինք նաեւ յետին դարերու մէջ յայտնուող հեղինակաւոր հայ աստուածաբաններու մեկնութեանց:

Ն. Եպս. Ծովական ի՞նչ կ'ընէ ասոնց դիմաց: «Մաքրագործում»ի ի նպատակ չափաւոր մեր վկայութիւնները միայն կը շարէ, յետոյ անոնց հեղինակներուն առնուները կը թուէ, եւ ասոնց ուրիշ ո՛ր եւ է նորութեան, կ'եզրակացնէ՝ իբրեւ թէ մենք խորապէս չենք ուսումնասիրած հարցը:

Այս ո՞րքան միամիտ պիտի ըլլան «Սիոն»ի ընթերցողները, որ խկոյն համոզուին այդ ըսածներուն:

2. — Նմանապէս Գրիգոր Նարեկացիի ականարկելով, թուած էինք ութը վկայութիւն՝ ի նպատակ «Անարատ Յղութեան», եւ հուսկ այն տողը՝ ուր «մաքրագործեալ» բառը կը գործածուի: Համեմատական վերլուծումի փորձէ մը վերջ, դիմած էինք

(1) Բազմավեկ, ՃԺԲ. (1954), Բ. 5, էջ 155-168:

(2) Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ - Մեր նախնեաց հաւատքը - Նկատողութիւններ: Սիոն, ԻԸ. (1954), Բ. 7-8, էջ 200-203:

(3) Գ. Պ. - Աստուածամեծի Անարատ Յղութիւնը: Շողակաթ, Գ. (1954), Բ. 9-10, էջ 290-291: